ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 55

«20» 07 2022 թ. գ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ՝ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 26-Ի «ԴԱՏԱԽԱԶՆԵՐԻ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ, ՀԱՐՑԱՇԱՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ 2007 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 1-Ի N 54 ԵՎ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 87 ՀՐԱՄԱՆՆԵՐՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 44 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քրեական և քրեական դատավարության նոր օրենսգրքերի՝ 2022թ. հուլիսի 1-ին ուժի մեջ մտնելու հանգամանքը, դատախազների ատեստավորման գործընթացը իստակեցնելու նպատակով, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասով, 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով, 30-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով և 50-րդ հոդվածով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի՝ 2018 թվականի ապրիլի 26-ի «Դատախազների ատեստավորում անցկացնելու կարգը սահմանելու, հարցաշարը հաստատելու ու Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2007 թվականի օգոստոսի 1-ի N 54 7 2017 թվականի սեպտեմբերի 25-ի N 87 հրամաններն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 44 հրամանի 2-րդ հավելվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն հրամանի կատարման վերահսկողությունը վերցնում եմ ինձ վրա:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

4. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին և ավագ դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին և ավագ դատախազներին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին ու օգնականներին և Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին:

Ա. ԴԱՎԹՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
գլխավոր դատախազի
2022 թվականի հուլիսի 20-ի
թիվ «55» հրամանի

«Հավելված N 2

Հայաստանի Հանրապետության
գլխավոր դատախազի
2018 թվականի ապրիլի 26-ի
թիվ 44 հրամանի

Ծանոթություն

Սույն հարցաշարում ընդգրկված հարցերի լիարժեք պատասխանները պետք է ներառեն դրանց օրենսդրական կարգավորումները, դրանց վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, Սահմանադրական դատարանի, Վճռաբեկ դատարանի, ՀՀ դատախազության կոլեգիայի որոշումներով և ՀՀ գլխավոր դատախազի հրամաններով սահմանված կանոններն ու դիրքորոշումները:

ՀԱՐՑԱՇԱՐ

ԴԱՏԱԽԱԶՆԵՐԻ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ

Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն

1) Հայաստանի Հանրապետության սահմանադրական կարգի հիմունքները.
2) Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները.
3) ՀՀ նախագահի սահմանադրաիրավական կարգավիճակը.
4) ՀՀ Ազգային ժողովը.
5) ՀՀ Կառավարությունը.
6) ՀՀ Բարձրագույն դատական խորհուրդը.
7) ՀՀ դատական համակարգը.
8) ՀՀ Սահմանադրական դատարանը.

9) ՀՀ դատախազության և քննչական մարմինների սահմանադրաիրավական կարգավիճակը:

<u>Եվրոպական կոնվենցիա և Եվրոպական դատարանի նախադեպային իրավունք</u>

10) Եվրոպական դատարանի որոշումների իրավաբանական բնույթը և նշանակությունը ՀՀ իրավական համակարգում.

11) Եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումները կյանքի իրավունքի վերաբերյալ.

12) Եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումները խոշտանգումների արգելման վերաբերյալ.

13) Եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումները ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքի վերաբերյալ.

14) Եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումները արդար դատաքննության իրավունքի վերաբերյալ. քրեական մեղադրանք հասկացությունը.

15) Եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումները արդար դատաքննության իրավունքի վերաբերյալ. գործերի քննությունը ողջամիտ ժամկետում.

16) Եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումները արդար դատաքննության իրավունքի վերաբերյալ. դատաքննության հրապարակայնությունը.

17) Եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումները արդար դատաքննության իրավունքի վերաբերյալ. անմեղության կանխավարկած.

18) Մեղադրյալի նվազագույն իրավունքները.

19) Եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումները քրեական գործերով գանգատարկման իրավունքի վերաբերյալ:

<u>«Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք</u>

20) Հայաստանի Հանրապետության դատախազության գործունեության սկզբունքները.

21) Հայաստանի Հանրապետության դատախազության համակարգը.

22) ՀՀ գլխավոր դատախազը.

23) Քրեական հետապնդում հարուցելը.

24) Հսկողությունը մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ.

25) Մեղադրանքի պաշտպանությունը դատարանում.

26) Դատարանների վճիռների, դատավճիռների և որոշումների բողոքարկումը.

27) Հսկողությունը պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ.

28) Պետական շահերի պաշտպանությունը.

29) Դատախազական ակտերը.

30) Հայաստանի Հանրապետության դատախազությունում ծառայողական ենթակայությունը և դասային աստիճանները.

31) Դատախազի իրավունքներն ու պարտականությունները.

32) Դատախազի խրախուսումն ու կարգապահական պատասխանատվությունը:

<u>Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրք</u>

33) ՀՀ քրեական օրենսդրության սկզբունքները.

34) Քրեական օրենքի գործողությունը ժամանակի ընթացքում և տարածության մեջ.

35) Հանցանքի հասկացությունը և հատկանիշները.

36) Հանցանքի տեսակները.

37) Հանցանքի օբյեկտի ընդհանուր բնութագիրը.

38) Հանցանքի օբյեկտիվ կողմի ընդհանուր բնութագիրը.

39) Հանցանքի սուբյեկտի ընդհանուր բնութագիրը.

40) Հանցանքի սուբյեկտիվ կողմի ընդհանուր բնութագիրը.

41) Անմեղսունակություն և սահմանափակ մեղսունակություն.

42) Առանց մեղքի վնաս պատճառելը.

43) Հանցագործությունների համակցությունը.

44) Հանցագործությունների ռեցիդիվը.

45) Ավարտված և չավարտված հանցագործությունները.

46) Հանցագործությունից կամովին հրաժարումը.

47) Հանցակցության հասկացությունը և հատկանիշները.

48) Հանցակիցների տեսակները.

49) Հանցակիցների պատասխանատվությունը, հանցակցի սահմանազանցումը.

50) Հանցանքը մի խումբ անձանց կամ հանցավոր կազմակեպության կողմից կատարելը.

51) Անհրաժեշտ պաշտպանությունը՝ որպես քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանք.

52) Հակահիրավական ոտնձգություն կատարած անձին բռնելիս վնաս պատճառելը որպես քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանք.

53) Ծայրահեղ անհրաժեշտությունը՝ որպես քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանք.

54) Անհաղթահարելի ուժը, ֆիզիկական կամ հոգեկան հարկադրանքը որպես քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանք.

55) Հրաման կամ կարգադրություն կատարելը որպես արարքի քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանք.

56) Պատժի հասկացությունը և նպատակները.

57) Պատժի տեսակները, հիմնական և լրացուցիչ պատիժները.

58) Պատասխանատվությունը կամ պատիժը մեղմացնող հանգամանքները.

59) Պատասխանատվությունը կամ պատիժը ծանրացնող հանգամանքները.

60) Պատիժ նշանակելը հանցագործությունների և դատավճիռների համակցությամբ.

61) Հանցակիցների պատասխանատվությունը.

62) Քրեական պատասխանատվությունից և պատժից ազատելու հիմքերը.

63) Պատիժը պայմանականորեն չկիրառելը և օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելը.

64) Համաներում և ներում.

65) Դատվածությունը.

66) Անչափահասների քրեական պատասխանատվության և պատժի առանձնահատկությունները.

67) Իրավաբանական անձի քրեական պատասխանատվության ընդհանուր պայմանները և իրավաբանական անձի նկատմամբ կիրառվող քրեաիրավական ներգործության միջոցները

68) Սպանության հասկացությունը և տեսակները.

69) Որակյալ սպանությունների տեսակները.

70) Արտոնյալ սպանությունների տեսակները.

71) Ինքնասպանության հասցնելու և ինքնասպանության հակելու քրեաիրավական բնութագիրը.

72) Առողջությանը վնաս պատճառելը.

73) Մարդուն առևանգելը և ազատությունից ապօրինի զրկելը.

74) Սեքսուալ բնույթի բռնի գործողությունները.

75) Հափշտակության հասկացությունը.

76) Ավազակությունը.

77) Գողության և կողոպուտի քրեաիրավական բնութագիրը.

78) Խարդախության քրեաիրավական բնութագիրը.

79) Վստահված գույքը հափշտակելու քրեաիրավական բնութագիրը.

80) Շորթման քրեաիրավական բնութագիրը.

81) Փողերի լվացման քրեաիրավական բնութագիրը.

82) Մասնավոր ոլորտում կաշառքի քրեաիրավական բնութագիրը.

83) Ահաբեկչության քրեաիրավական բնութագիրը.

84) Պատանդ վերցնելու կամ պահելու քրեաիրավական բնութագիրը.

85) Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովմանն ուղղված պահանջները կամ ճանապարհային երթևեկության կամ տրանսպորտային միջոցների շահագործման անվտանգությունն ապահովող կանոնները խախտելու քրեաիրավական բնութագիրը.

86) Խուլիգանության քրեաիրավական բնութագիրը.

87) Դիակն ու գերեզմանն անարգանքի ենթարկելը.

88) Թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի, դրանց պատրաստուկների կամ դրանց համարժեք նյութերի (անալոգի) ապօրինի շրջանառությունն իրացնելու նպատակով կամ դրանք ապօրինի իրացնելը.

89) Իշխանությունը յուրացնելու քրեաիրավական բնութագիրը.

90) Պաշտոնատար անձի կողմից իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունը չարաշահելը կամ լիազորություններն անցնելը.

91) Խոշտանգման քրեաիրավական բնութագիրը.

92) Կաշառք ստանալու և տալու, կաշառքի միջնորդության քրեաիրավական բնութագրերը.

93) Դատավորի, դատախազի, քննիչի, քննչական մարմնի ղեկավարի, հետաքննության մարմնի, փաստաբանի, ներկայացուցչի, փորձագետի կամ հարկադիր կատարողի նկատմամբ սպառնալիքը կամ նրանց մասին տեղեկություն հրապարակելը կամ նրանց գույքը ոչնչացնելը կամ վնասելը կամ նրանց նկատմամբ բռնություն գործադրելը.

94) Ինքնիրավչությունը.

95) Պարտադիր զինվորական կամ այլընտրանքային ծառայությունից կամ զորահավաքային զորակոչից խուսափելը.

96) Սուտ մատնությունը.

97) Հանցագործության մասին չհայտնելը, պարտակելը.

98) Սուտ ցուցմունք, կեղծ եզրակացություն կամ կեղծ կարծիք տալը կամ սխալ թարգմանություն կատարելը.

99) Դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքը.

100) Արգելանքի տակ գտնվող գույքի նկատմամբ ապօրինի արարքը.

101)Ապօրինի ձերբակալելու կամ կալանավորելու քրեաիրավական բնութագիրը.

102) Ապացույցներ, բացատրություններ կամ դատավարական փաստաթղթեր կամ օպերատիվ-հետախուզական միջոցառման արդյունքով ստացված տվյալներ կամ առարկաներ կեղծելու, փոխելու, ոչնչացնելու կամ թաքցնելու կամ կեղծ ապացույցներ ներկայացնելու քրեաիրավական բնութագիրը.

103) Զինծառայողների փոխհարաբերությունների կանոնագրքային կանոնները խախտելը նրանց միջև ստորադասության (ենթակայության) հարաբերությունների բացակայության դեպքում.

104) Զորամասը կամ ծառայության վայրն ինքնակամ թողնելու կամ ժամանակին ծառայության վայր չներկայանալու քրեաիրավական բնութագիրը.

105) Մարտական հերթապահության կամ մարտական ծառայություն կրելու կանոնները խախտելու քրեաիրավական բնութագիրը.

106) Իշխանազանցության կամ իշխանությունը չարաշահելու քրեաիրավական բնութագիրը:

<u>Քրեական դատավարության օրենսգիրք</u>

107) Քրեական դատավարության օրենսգրքում օգտագործվող հասկացությունները.

108) Քրեական հետապնդում իրականացնելու ձևերը և քրեական հետապնդումը բացառող հանգամանքները.

109) Անձնական ազատությունը և անձեռնմխելիությունը.

110) Կրկին դատվելու անթույլատրելիությունը.

111) Մասնավոր և ընտանեկան կյանքի գաղտնիությունը.

112) Պատշաճ ապացուցումը.

113) Կողմերի հավասարությունը և մրցակցությունը քրեական դատավարությունում.

114) Վարույթի լեզուն.

115) Վարույթի հանրային մասնակիցները և նրանց փոխհարաբերությունները.

116) Մեղադրանքի կողմը ՀՀ քրեական դատավարությունում.

117) Պաշտպանության կողմը ՀՀ քրեական դատավարությունում.

118) Օրինական ներկայացուցիչները ՀՀ քրեական դատավարությունում.

119) Վարույթին օժանդակող անձինք.

120) Ինքնաբացարկը, բացարկը կամ վարույթին մասնակցելուց ազատելը.

121) Վարույթին ներգրավված անձանց հատուկ պաշտպանությունը.

122) Ապացույցների հասկացությունը և տեսակները.

123) Ապացույցների թույլատրելիությունը և դրանց օգտագործման սահմանափակումները.

124) Օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքները՝ որպես ապացույց.

125) Ապացուցման ենթակա փաստական հանգամանքները. որոշակի ապացույցներով հաստատվող հանգամանքները.

126) Ձերբակալման տեսակները և ժամկետի հաշվարկը.

127) Ձերբակալման հիմքերն ու դատավարական կարգը.

128) Խափանման միջոցների տեսակները և խափանման միջոցի կիրառման իրավաչափությունը.

129) Խափանման միջոց փոխել կամ վերացնելը.

130) Կալանք խափանման միջոցի կիրառման հիմքերը և դատավարական կարգը.

131) Տնային կալանք և գրավ խափանման միջոցների խափանման միջոցի կիրառման հիմքերը և դատավարական կարգը.

132) Վարչական հսկողություն, դաստիարակչական հսկողություն և զինվորական հսկողություն խափանման միջոցների կիրառման հիմքերն ու դատավարական կարգը.

133) Պաշտոնավարման կասեցում, երաշխավորություն և բացակայելու արգելք խափանման միջոցների կիրառման հիմքերն ու դատավարական կարգը.

134) Գույքի արգելադրումը.

135) Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց նկատմամբ կիրառվող հարկադրանքի միջոցները.

136) Վարույթի մասնակից ճանաչելու միջնորդությունը.

137) Վարույթի հանրային մասնակիցների վարութային ակտերի բողոքարկումը .

138) Գույքային հայցը քրեական վարույթում.

139) Վարութային ծախսերը.

140) Ժամկետները քրեական վարույթում.

141) Քրեական վարույթ նախաձեռնելու հիմքերը և կարգը.

142) Մինչդատական վարույթի ընդհանուր պայմանները

143) Հանրային քրեական հետապնդում հարուցելու, չհարուցելու կամ դադարեցնելու դատավարական կարգը.

144) Հանրային քրեական հետապնդման ժամկետները, ժամկետը կասեցնելու հիմքերը և դատավարական կարգը.

145) Չհարուցված կամ դադարեցված քրեական հետապնդումը նորոգելը.

146) Քննչական գործողությունների կատարման ընդհանուր պայմանները.

147) Վկայի և տուժողի հարցաքննության դատավարական կարգը.

148) Մեղադրյալի և ձերբակալվածի հարցաքննության դատավարական կարգը.

149) Զննման, արտաշիրմման և քննման դատավարական կարգը.

150) Առերեսման դատավարական կարգը.

151) Ճանաչման ներկայացնելու դատավարական կարգը.

152) Խուզարկության և առգրավման դատավարական կարգը.

153) Ցուցմունքը տեղում ստուգելու և փորձարարության դատավարական կարգը.

154) Գաղտնի քննչական գործողությունների կատարման ընդհանուր պայմանները.

155) Գաղտնի քննչական գործողությունների տեսակները.

156) Փորձաքննություն նշանակելու և կատարելու դատավարական կարգը.

157) Նախաքննության ավարտը քրեական վարույթը կարճելով.

158) Նախաքննության ավարտը մեղադրական եզրակացություն կազմելով.

159) Մեղադրական եզրակացությամբ ստացված վարույթի նյութերով ստուգման ենթակա հանգամանքները և հսկող դատախազի որոշումը.

160) Խափանման միջոցների կիրառման դատական երաշխիքները.

161) Ապացուցողական գործողությունների կատարման դատական երաշխիքները.

162) Սեփականության իրավունքի սահմանափակման դատական երաշխիքները.

163) Վարույթի հանրային մասնակիցների վարութային ակտերի իրավաչափության դատական երաշխիքները.

164) Ցուցմունքի դատական դեպոնացումը.

165) Նախնական դատալսումները.

166) Հիմնական դատալսումները.

167) Լրացուցիչ դատալսումները և դատավճիռ կայացնելը.

168) Դատախազի լիազորությունները դատական վարույթի ընթացքում.

169) Ներկայացված մեղադրանքը փոփոխելու կամ լրացնելու կարգը.

170) Դատավճիռը.

171) Դատական վերանայման ընդհանուր պայմանները.

172) Վերաքննությունը.

173) Վճռաբեկությունը.

174) Հատուկ վերանայումը.

175) Բացառիկ վերանայումը.

176) Անչափահասին վերագրվող հանցանքի վերաբերյալ վարույթը.
177) Բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու վարույթը.
178) Իրավաբանական անձի վերաբերյալ վարույթը.
179) Մասնավոր մեղադրանքով վարույթը.
180) Համաձայնեցման վարույթը.
181) Համագործակցության վարույթը.
182) Մեղադրյալի բացակայությամբ իրականցվող վարույթը.
183) Հանձնումը որպես քրեական գործերով իրավական օգնության հիմնական տեսակ:

<u>Քրեագիտություն</u>

184) Քննչական վարկածները.
185) Դեպքի վայրի զննության մարտավարությունը.
186) Խուզարկության մարտավարությունը.
187) Կասկածյալի և մեղադրյալի հարցաքննության մարտավարությունը.
188) Դիակի դատաբժշկական փորձաքննությամբ լուծվող հանգամանքները և փորձագետին առաջադրվող հարցերը.
189) Անձանց դատաբժշկական փորձաքննությամբ պարզվող հանգամանքները և փորձագետին առաջադրվող հարցերը.
190) Դատաձեռագրաբանական և դատափաստաթղթաբանական փորձաքննություններով պարզվող հանգամանքները և փորձագետին առաջադրվող հարցերը.
191) Հետքաբանական փորձաքննությամբ պարզվող հանգամանքները և փորձագետին առաջադրվող հարցերը.
192) Դատաձգաբանական փորձաքննությամբ լուծվող հարցերը.
193) Դատաավտոտեխնիկական փորձաքննությամբ պարզվող հանգամանքները և փորձագետին առաջադրվող հարցերը.
194) Սպանությունների քննության մեթոդիկան.
195) Գողությունների քննության մեթոդիկան.
196) ՃԵԿ խախտումների վերաբերյալ գործերի քննության մեթոդիկան:

<u>Քաղաքացիական օրենսգիրք</u>

197) Քաղաքացիական իրավունքի հասկացությունը և խնդիրները.
198) Քաղաքացիական իրավահարաբերությունների ծագման հիմքերը.
199) Իրավաբանական անձի հասկացությունը և հատկանիշները.
200) Իրավաբանական անձանց տեսակները.
201) Հայաստանի Հանրապետության և համայնքների իրավասուբյեկտության առանձնահատկությունները.
202) Պետական և համայնքային կառավարչական հիմնարկների, ոչ առևտրային կազմակերպությունների իրավական կարգավիճակի առանձնահատկությունները.

203) Պետական և համայնքային սեփականության իրավունքի հասկացությունը, ծագման և դադարման հիմքերը, պետական սեփականության իրավունքի օբյեկտները.

204) Հողի նկատմամբ սեփականության իրավունքը և այլ գույքային իրավունքները.

205) Պետության և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման կարգը: Պետության սեփականություն հանդիսացող հողամասերն օգտագործման, վարձակալության տրամադրելու հիմքերն ու կարգը.

206) Ապօրինի շինարարության և ինքնակամ կառույցի հասկացությունը, կարգավիճակը.

207) Սեփականության իրավունքի պաշտպանության քաղաքացիաիրավական եղանակները.

208) Գործարքի հասկացությունը, գործարքի տեսակները և ձևը, գործարքի վավերության պայմանները.

209) Հայցային վաղեմություն.

210) Պարտավորության հասկացությունը, տեսակները և տարրերը.

211) Պայմանագիրը փոփոխելը և լուծելը.

212) Պարտավորությունների կատարման հասկացությունը, կատարումն ապահովելու միջոցները: Պարտավորությունների դադարումը.

213) Քաղաքացիաիրավական պատասխանատվության տեսակները և հիմքերը.

214) Վնաս պատճառելու համար պատասխանատվության հիմքերը.

215) Անհիմն հարստացման հետևանքով ծագող պարտավորության հասկացությունը և տեսակները:

<u>Քաղաքացիական դատավարության օրենսգիրք</u>

216) Քաղաքացիական դատավարության հասկացությունը և խնդիրները.

217) Քաղաքացիական դատավարության փուլերի ընդհանուր բնութագիրը.

218) Կողմերի հասկացությունը, նրանց դատավարական իրավունքները և պարտականությունները.

219) Երրորդ անձանց հասկացությունը: Վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ ներկայացնող և չներկայացնող երրորդ անձինք.

220) Քաղաքացիական դատավարությանը դատախազի մասնակցության հիմքերը: Դատախազի կարգավիճակը քաղաքացիական դատավարությունում.

221) Քաղաքացիական գործերի ընդդատության հասկացությունը և տեսակները.

222) Ապացույցների հասկացությունը և դասակարգումը: Ապացույցների տեսակները.

223) Ապացուցման բեռը քաղաքացիական դատավարությունում.

224) Հայցային վարույթի հասկացությունը և էությունը.

225) Հայցի հասկացությունը: Հայցի տարրերը և հայցի հարուցման իրավունքը.

226) Հայցի ապահովում.

227) Իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի հաստատման գործերի վարույթ.

228) Դատական ակտը նոր երևան եկած հանգամանքներով վերանայելու վարույթ.

229) Նոր հանգամանքներով վճիռների և որոշումների վերանայման վարույթ.

230) Վերաքննիչ վարույթի ընդհանուր բնութագիրը և վերաքննիչ բողոքարկման իրավունքը: Վերաքննիչ բողոք բերելու կարգը.

231) Վճռաբեկ վարույթը, վճռաբեկ բողոքարկման իրավունքը: Վճռաբեկ բողոք բերելու կարգը.

232) Վճռաբեկ բողոք բերելու հիմքերը.

233) Դատախազի կողմից դատական ակտերի բողոքարկումը վերաքննության և վճռաբեկության կարգով.

234) Օտարերկրյա դատարանների և արբիտրաժների վճիռների ճանաչումը և կատարումը:

<u>ՀՀ վարչական դատավարության օրենսգիրք</u>

235) Վարչական դատավարության հասկացությունը և խնդիրները.

236) Վարչական դատարան դիմելու իրավունքը.

237) Վարչական դատավարության մասնակիցները.

238) Գործ հարուցելու հիմքը և հայցի տեսակները.

239) Հայց ներկայացնելու ժամկետները և հայցադիմումին ներկայացվող պահանջները.

240) Հայցադիմումը վարույթ ընդունելը, հայցադիմումի ընդունումը մերժելը.

241) Հայցադիմումի պատասխան ներկայացնելու կարգը.

242) Ապացույցները վարչական դատավարությունում: Լրացուցիչ ապացույցների ընդունումը և հետազոտումը.

243) Ապացուցման բեռը վարչական դատավարությունում.

244) Վարչական դատարանի դատական ակտերը, դրանց ուժի մեջ մտնելը և բողոքարկման կարգը.

245) Դատախազի կողմից դատական ակտերի բողոքարկումը.

246) Վարչական դատարանի բողոքարկման ենթակա միջանկյալ դատական ակտերը, դրանց դեմ բողոք բերելու իրավունքը և ժամկետները.

247) Դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու մասին գործերի վարույթ:

<u>«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք</u>

248) Վարչարարության հասկացությունը և սկզբունքները.

249) Վարչական մարմինները ՀՀ-ում.

250) Վարչական վարույթը և այն իրականացնող մարմինները.

251) Վարչական վարույթի մասնակիցները, փուլերը և ժամկետները.

252) Վարչական ակտը և դրա տեսակները.

253) Վարչական ակտի ձևերը և գրավոր վարչական ակտին ներկայացվող պահանջները.

254) Վարչական ակտի որոշակիությունը և հիմնավորվածությունը.
255) Վարչական ակտ ընդունելը և ուժի մեջ մտնելը.
256) Վարչական ակտի ընդունման մասին իրազեկելը.
257) Վարչական ակտի գործողության ժամկետը.
258) Վարչական ակտն առոչինչ համարելու հիմքերը և կարգը.
259) Վարչական ակտը ոչ իրավաչափ համարելու դեպքերը և հետևանքները.
260) Իրավաչափ վարչական ակտի ուժը կորցնելը.
261) Վարչական բողոք բերելու հիմքերը և կարգը.
262) Վարչական ակտի բողոքարկման ժամկետները.
263) Վարչարարությամբ պատճառված վնասի համար պատասխանատվություն կրողը և պատասխանատվության հիմքերը.
264) Վարչարարությամբ պատճառված վնասի հատուցումը.
265) Անբողոքարկելի վարչական ակտերի կատարումը:

<u>Պետական շահերի պաշտպանություն</u>

266) Քաղաքացիական և վարչական դատավարությունում դատախազի կարգավիճակը և մասնակցության հիմքերը.
267) Պետական շահերի պաշտպանության հայց հարուցելու նպատակով կամ հայց հարուցելիս դատախազի իրավունքները.
268) Դատախազի կողմից պետական շահերի պաշտպանության հայց հարուցելու հիմքերը և հայցի տեսակները.
269) Կատարողական վարույթի հարուցման հիմքերը և կարգը.
270) Կատարողական վարույթի հարուցման ժամկետները.
271) Հարկադիր կատարողի որոշումները և դրանց բողոքարկումը:

<u>Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգիրք</u>

272) Դատապարտյալի հիմնական իրավունքները.
273) Դատապարտյալի կապն արտաքին աշխարհի հետ.
274) Դատապարտյալին տեսակցություններ տրամադրելու կարգն ու պայմանները.
275) Դատապարտյալին կարճաժամկետ մեկնում տրամադրելու կարգն ու պայմանները
276) Դատապարտյալի պարտականություններն ու նյութական պատասխանատվությունը
277) Դատապարտյալի աշխատանքն ուղղիչ հիմնարկում՝ կարգն ու պայմանները.
278) Տուգանք պատժատեսակի կատարման կարգը, տուգանքը վճարելու անհնարինությունը, տուգանքի վճարումից չարամտորեն խուսափելն ու դրանց հետևանքները.
279) Որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելու պատժատեսակի՝ որպես հիմնական և լրացուցիչ պատիժ, կատարման կարգն ու առանձնահատկությունները.

280) Լրացուցիչ պատիժների (հատուկ կամ զինվորական կոչումից, կարգից, աստիճանից կամ որակավորման դասից զրկելը, գույքի բռնագրավումը) կատարման կարգն ու առանձնահատկությունները.

281) Հանրային աշխատանքներ պատժատեսակի կատարման կարգն ու առանձնահատկությունները.

282) Կարգապահական գումարտակում պահելու կարգն ու առանձնահատկությունները.

283) Կալանք պատժատեսակի կատարման կարգն ու առանձնահատկությունները.

284) Ուղղիչ հիմնարկում դատապարտյալներին անջատ պահելու կանոնները.

285) Քրեակատարողական հիմնարկների ներքին կանոնակարգը.

286) Ազատազրկման դատապարտված անձի նկատմամբ կիրառվող խրախուսանքի միջոցները.

287) Ազատազրկման դատապարտված անձի նկատմամբ կիրառվող տույժի միջոցները.

288) Ազատազրկման դատապարտված անձի կողմից պատիժը կրելու սահմանված կարգի չարամիտ խախտումները.

289) Պատժի կրման առանձնահատկություններն ըստ ուղղիչ հիմնարկի տեսակի.

290) Ուղղիչ հիմնարկների տեսակները, դրանց առանձնահատկություններն ու ուղղիչ հիմնարկի տեսակը փոփոխելու կարգը.

291) Պատժից ազատելու հիմքերը, կարգը, վերահսկողությունը պատժից ազատելու և պատիժը պայմանականորեն չկիրառելու դեպքերում.

292) Բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու կարգը, այդ միջոցները փոփոխելու և դադարեցնելու հիմքերը.

293) Դատապարտյալին պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու գործընթացը.

294) Պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժով փոխարինելու կարգն ու պայմանները.

295) Ուղղիչ հիմնարկի վարչակազմի պարտականություններն ազատվող դատապարտյալի աշխատանքն ու կենցաղը կարգավորելու հարցում

296) Ցմահ ազատազրկման դատապարտված անձի՝ պատիժը կրելու առանձնահատկությունները.

297) Անչափահաս դատապարտյալի պատիժը կրելու առանձնահատկությունները.

298) Վերահսկողությունը և հսկողությունը պատիժները կատարելու նկատմամբ.

299) Պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբան դատախազական հսկողության առանձնահատկությունները.

300) Ուղղիչ հիմնարկի պետի որոշումների կասեցման կարգն ու պայմանները.

301) Պատիժը կրելու վայր մուտքի և ելքի կարգը:

«Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենք

302) Ձերբակալված կամ կալանավորված անձանց հիմնական իրավունքները.

303) Պաշտպանի, մերձավոր ազգականների և այլ անձանց հետ տեսակցելը.

304) Ձերբակալված կամ կալանավորված անձանց կապն արտաքին աշխարհի հետ.

305) Ձերբակալված կամ կալանավորված անձանց պարտականությունները.

306) Կանանց և անչափահասների արգելանքի կամ կալանքի տակ պահելու առանձնահատկությունները.

307) Ձերբակալված անձանց՝ ձերբակալվածների պահելու վայրերում և կալանավորված անձանց՝ կալանավորվածների պահելու վայրերում անջատ պահելու սկզբունքը.

308) Կալանավորված անձանց նկատմամբ կիրառվող տույժի և խրախուսանքի միջոցները.

309) Պատժախցում կալանավորված անձանց պահելու առանձնահատկությունները.

310) Ձերբակալված անձանց արգելանքից և կալանավորված անձանց կալանքից ազատելու կարգը.

311) Մուտքն ու ելքը ձերբակալվածներին և կալանավորվածներին պահելու վայրեր: